ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/11»

ք. Երևան «20» 03 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Առեդիտ» ՍՊԸ-ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Գ. Մարգարյանը (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի (ազդօրինակի) հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում:

բ) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի և դրա փուլի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Մինչև պայմանագրի կնքումը կարգավորել և Պատվիրատուին ներկայացնել գրքի հրատարակման հետ կապված հեղինակային իրավունքի տրամադրումը հաստատող հիմքերը. (պայմանագիր կամ նամակագրություն հեղինակի և թարգմանչի հետ):

2.4.3. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում. (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս,մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը:

2.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.6 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.1.1 Աշխատանքի փուլը Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին դրանից ոչ պակաս, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ուղարկելով հրատարակության մակետը (ները) և կատարված Աշխատանքի փուլի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փուլի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները) և կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 5 (հինգ) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

Ընդունմանը ներկայացվող Աշխատանքը համատեղ զննվում է Պատվիրատուի և Կատարողի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում և այն ընդունելու դեպքում Կատարողը իր միջոցներով Աշխատանքը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին: Աշխատանքը «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին փոխանցելու հանձնման-ընդունման արձանագրության օրինակը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով՝Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 7 150 000 **(յոթ միլիոն հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում, հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 100 %-ը՝ 7 150 000 **(յոթ միլիոն հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման

ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան՝ **2017 թ. դեկտեմբերի 20-ը**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կամ դրա մի մասի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և .սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 78/26, հեռ.՝ 010544788 ՀՎՀՀ 02598919, հ/հ 1570012456510100, «Ամերիաբանկ» ՓԲԸ
Ս. Մուրադյան (ստորագրություն)	Գ. Մարգարյան (ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«28» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/11» ծածկագրով գնման պայմանագրի

1-ին չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝ Հեղինակային խումբ.
«Իզմ» մշակութային (թատրոն, կինո, կերպարվեստ, երաժշտարվեստ) հանրագիտարան-բառարան» (երկու հատորով)

N N	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Հանրագիտարանային, դասագրքային, տեղեկատվական, բառարանային բնույթի աշխատություն՝ նախատեսված ոչ միայն արվեստի ԲՈՒՀ-երի ուսանողների, այլ նաև մշակույթի բնագավառի աշխատողների ու պարզապես արվեստասեր ընթերցողների համար:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝** Չափը՝ 60x84 1/8 Ծավալը՝ առնվազն 50 տպագր. մամուլ (400 էջ), երկուսը միասին Տպաքանակ՝ 200 օրինակ՝ յուրաքանչյուր հատորը: **Միջուկի թղթի բնութագրիչները՝** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ օֆսեթ առնվազն՝ 110 գ/ք.մ. 1.8 ծավալային կշռով Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Այլ բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Mariam Շապիկը՝ կոշտ, լամինացված, տեղային լաք Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Տեքստի մգությունը՝ 1.20 – 1.60 (+-0.15) Գույների քանակը 4+4 Նկարների տպագրությունը՝ CTP, նվազագույնը 2400 dpi (կետերի քանակը մեկ դյումում խտությամբ) Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: Կազմարարությունը՝ թելակար:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների)	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին

	վրա	հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1. Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 50,0 տպագրական մամուլ: 2. Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» նոյեմբեր, 2017թ.**
Աշխատանքն ամբողջությամբ	**սկիզբը**	**ավարտը**
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	**«01» դեկտեմբեր, 2017 թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 78/26,
հեռ.՝ 010544788
ՀՎՀՀ 02598919, հ/հ 1570012456510100,
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Գ. Մարգարյան
(ստորագրություն)

«ARED IT» «ԱՌԵԴԻՏ» 02598919 Կ.Տ. «ԱՌԵԴԻՏ»

2-րդ չափաբաժին

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը՝

Հեղինակային խումբ. «Հովհաննես Այվազովսկի»

N N	Աշխատանքի բնութագրի տարրերը	Նկարագրությունները
1	Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը	Այվազովսկու կյանքը, գործը ներկայացնող գիրք ալբոմ, որտեղ կներկայացվի Այվազովսկի մարդը, ծովանկարիչը, բնանկարիչը, դիմանակարիչը և հասարակական գործիչը:
2	Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը	**Ընդհանուր բնութագրիչներ՝** Չափը՝ 70x100 1/12 Ծավալը՝ առնվազն 16 տպագր. մամուլ (192 էջ), Տպաքանակ՝ 300 օրինակ: **Միջուկի թղթի բնութագրիչները՝** Տեսակը՝ կավճապատ Կշիռը՝ կավճապատ առնվազն՝ 110 գ/ք.մ, Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **Այլ բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Mariam Շապիկը՝ փափուկ, լամինացված, տեղային լաք Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Տեքստի մգությունը՝ 1.20 – 1.60 (+-0.15) Գույների քանակը 4+4 Նկարների տպագրությունը՝ CTP, նվազագույնը 2400 dpi (կետերի քանակը մեկ դյումում խտությամբ) Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: Կազմարարությունը՝ թելակար:
3	Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա	Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն:
4	Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը	1.Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը /ազդօրինակը/ 16,0 տպագրական մամուլ: 2.Հրատարակության անորակ օրինակները **կատարողը** վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա **ժամկետում**:

Աշխատանքի կատարման ժամկետը		
Աշխատանքի փուլը 1 մակետ (ազդօրինակ)	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» նոյեմբեր, 2017թ.
Աշխատանքն ամբողջությամբ	սկիզբը	ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	«01» դեկտեմբեր, 2017 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործադիր տնօրենի վարչությունում

Մ. Մուրադյան
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 78/26,
հեռ.՝ 010544788
ՀՎՀՀ 02598919, հ/հ 1570012456510100,
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Գ. Մարգարյան
(անուն, ազգանուն)

«ԱՌԵԴԻՏ» Կ.Տ. 02598919 «ԱՐԵԴԻՏ»

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«10» «03» 2017թ. կնքված

N «ՀՀՄՇ-ԲՀԱՀԱՇՁԲ-17/11» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Ծավալը (տպագրական մամուլ)	Տպաքանակը (օրինակ)	Տպագրվող մեկ օրինակի գինը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում										
					մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	՝ Հեղինակային խումբ. «Իզմ» մշակութային (թատրոն կինո, կերպարվեստ, երաժշտարվեստ) հանրագիտարան-բառարան (երկու հատորով)	50,0	200 օրինակ	19750	395000	237000	237000	237000	3950000	3950000	3950000	3950000	3950000	3950000	3950000
2.	Հեղինակային խումբ. «Հովհաննես Այվազովսկի»	16,0	300 օրինակ	10667	320000	1920000	1920000	1920000	3200000	3200000	3200000	3200000	3200000	3200000	3200000

Ընդամենը				715000	4290000	4290000	4290000	7150000	7150000	7150000	7150000	7150000	7150000	7150000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 78/26,
հեռ.՝ 010544788
ՀՎՀՀ 02598919, հ/հ 1570012456510100, «Ամերիաբանկ» ՓԲԸ

Գ. Մարգարյան
(ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«20» «03» 2017թ. կնքվա

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/11» ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ	**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 78/26, հեռ.՝ 010544788 ՀՎՀՀ 02598919, հ/հ 1570012456510100, «Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝ 58-51-96, 58-51-78 ՀՎՀՀ 08030202, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2017 թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/11 Պատվիրատուն՝ ի դեմս Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ա. Ավանեսյանի և Կատարողը՝ «ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ-ն , ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող Տնօրեն՝ Գ. Մարգարյանի, հիմք ընդունելով, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								
	ընդամենը							

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն

ՀԱՎԵԼՎԱԾ N 3.

«__» «_____» 2017թ. կնքվա

N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/11» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու և «ԱՌԵԴԻՏ» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ.կնքված N ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախաձգված ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱՀ

Տնօրենի պաշտոնակատար՝ Վ. Սարգսյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.աղ. Երևան 14.12.2016թ.

«Առեդիտ» ՍՊԸ-ն, այսուհետև Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Գ. Մարգարյանի, մի կողմից, և գրքի կազմող Սամվել Մելքոնյանը, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կազմած «Հովհաննես Այվազովսկի» Այվազովսկու կյանքը, գործը ներկայացնող գիրք ալբոմի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար հեղինակային իրավունքի իրավատիրոջ (Պատվիրատուի) թույլտվությունը պարտադիր է:

2. Կողմերի պարտականությունները

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 250.0 հազ. դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 300 օրինակ:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ մտցնել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Առեդիտ» ՍՊԸ	Սամվել Մելքոնյան
ՀՀ, ք.Երևան, Հանրապետության78/26	ՀՀ, ք. Երևան, Շահումյանի 7 փ., տ. 11
ՀՎՀՀ 02[illegible]019	անձնագիր՝ AK0674879
Տնօրեն Գ.Մարգարյան	Սամվել Մելքոնյան

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 14.12.2016թ.

«Առեդիտ» ՍՊԸ-ն, այսուհետև Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Գ. Մարգարյանի, մի կողմից, և գրքի հեղինակ Գոհար Մարգարյանը, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր հեղինակած «Իզմ» մշակութային (թատրոն, կինո, կերպարվեստ, երաժշտարվեստ) հանրագիտարան-բառարան»-ի (երկու հատորով) հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար հեղինակային իրավունքի իրավատիրոջ (Պատվիրատուի) թույլտվությունը պարտադիր է:

2. Կողմերի պարտականությունները

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար, վճարել 150.0 հազ. դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գրքի յուրաքանչյուր հատորից տպագրել - 200 օրինակ:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ մտցնել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիկական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Առեդիտ>> ՍՊԸ	Գոհար Մարգարյան
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 78/26	ՀՀ, ք. Երևան, Վարուժանի 2
ՀՎՀՀ 02598919	անձնագիր՝ AK0605350
Տնօրեն Գ. Մարգարյան	Գոհար Մարգարյան